



ՊԱՏԻՎ ՈՒՆԵՍ



ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊՒ ԿՐԺԱՆԱԴԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ Թիվ 6(21), 27 հուլիսի, 2019թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ



Հայաստանի Հանրապետության նախագահի հուլիսի 3-ի թիվ ՆՂ-152-Ա հրամանագրի համաձայն՝ ՀՀ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանին շնորհվել է ոստիկանության գեներալ-մայորի կոչում:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի անձնակազմը շնորհավորում է ՀՀ ոստիկանության պետ, ոստիկանության գեներալ-մայոր Վալերիյ Օսիպյանին պատվաբեր կոչման արժանանալու կապակցությամբ և ցանկանում նորանոր բարձունքներ բարդ և պատասխանատու ծառայությունում՝ հանուն Հայաստանի Հանրապետության անվտանգության, բարոյական արժեքների և իրավական կարգի ամրապնդման:

ՖՈԿՈՒՍ-ԽՄԲԱՅԻՆ ԸՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔԻ ԿՈՐՄԻՏ

2019 թվականի հունիսի 20-ից 28-ը Կրթահամալիրում կրթական միջավայրի առավելություններն ու թերությունները քննարկելու և կրթության որակի բարելավմանն ուղղված առաջարկություններ նշակելու նպատակով, Կրթության որակի ապահովման բաժանմունքի նախաձեռնությամբ անցկացվեցին ֆոկուս-խմբային քննարկումներ, որոնց մասնակցում էին ակադեմիայի և քոլեջի ամբիոնների դասախոսները:

Քննարկումների ընթացքում անդրադարձան հետևյալ թեմաներին՝ դասընթացներ, առարկայական ծրագրերի գնահատում ու վերանայում, դասախոսների իրականացում և բարելավում, դասա-

կարծիքն ազատ արտահայտելուց, և հավաքագրման այս «անկեղծ» մեթոդի արդյունքում կարող է ծնվել ամենաստեղծարար գաղափարը (առաջարկությունը): Նախաձեռնությունը, իհարկե, կարևոր նշանակություն ունի, և այս մեթոդի արժեքավորությունն այն է, որ հարցազրույցի ազատ բնույթը հաճախ թույլ է տալիս ստանալ անսպասելի տեղեկատվություն»,-նշեց բաժանմունքի առաջատար մասնագետ Արուսյակ Գևորգյանը:

Որակի ապահովման տեսանկյունից կարևոր են այն միջոցառումներն ու դրանց իրականացման համար կիրառվող գործիքները, որոնք կարող են իրականաց-

ԵՄ ԸՆՏՐԵԼ ԵՄ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԸ, ԲԱՆԻ ՈՐ...

- ուսանելու օրվանից ՀՀ ոստիկանության ծառայող եմ,

- ուսման ողջ ժամանակահատվածում ստանում եմ վարձատրություն՝ Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի չափով,

- ստանում եմ բարձրագույն իրավաբանական կամ ոստիկանական միջին մասնագիտական կրթություն,

- գերազանց առաջադիմության դեմքում ստանում եմ ՀՀ ոստիկանության ղեկի անվանական կրթաթոշակ,

- ավարտելիս ինձ կճանաչի «ոստիկանության լեյտենանտ» կոչում, և կնշանակվեմ ծառայության ՀՀ ոստիկանությունում:



վանդման նորագույն տեխնոլոգիաների ներդրման և կիրառման համար անհրաժեշտ պայմաններ, դասախոսների հետազոտական ներուժի գործադրման հնարավորություններ և այլն:

Վերոնշյալ հարցերի շուրջ ծավալվեց բաց և անկեղծ երկխոսություն, արծարծվեցին այնպիսի հարցեր, որոնց նպատակն էր պարզել, օրինակ՝ կա՞ն արդյոք դասախոսներ, որոնք ուսանողների հետ համատեղ հրատարակել են հոդվածներ, առկա՞ է արդյոք համապատասխան մոտիվացիա, ինչպիսի՞ն է բուհական միջավայրը, ի՞նչ բարեփոխումներ են ակնկալում:

«Ֆոկուս-խումբ ենք անցկացնում, որովհետև հարցազրույցի այս ձևը թույլ է տալիս հավաքագրել իրական տեղեկատվություն, դասախոսը չի կաշկանդվում իր

վել որոշակի ուսումնասիրություն կատարելու և հստակ պատկեր ստանալու համար: Այդպիսի գործիք է համարվում ֆոկուս-խմբային քննարկումը, որը թույլ է տալիս հետազոտել առկա խնդիրները և վեր հանել այն պատճառները, որոնք հրատապ լուծումներ են պահանջում և ունեն հաստատության համար առաջնահերթ նշանակություն: Հիշյալ ձևաչափով քննարկումներ անցկացվելու են մաս սովորողների շրջանում առկա խնդիրները վեր հանելու և լուծումներ մշակելու համար:

Հավաքագրված տեղեկատվությունը վերլուծվելու է, և դրա հիման վրա բաժանմունքն առաջարկություններ կներկայացնի Կրթահամալիրի ղեկավարությանը:

Արուսյակ Գևորգյան

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՆՅԿԱՅՐԵՑ ՀԵՐԹԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԸ



2019 թվականի հուլիսի 8-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի վերապատրաստման և ատեստավորման ֆակուլտետում դասը կրկին վարում էր ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Հովհաննես Քոչարյանը: Հ. Քոչարյանը ՀՀ ոստիկանության վարչությունների պետերի օպերատիվ գծով տեղակալներին, բաժինների պետերին և օպերատիվ գծով տեղակալներին, տարածքային, քրեական հետախուզության և անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի պետերին «ՀՀ քրեական դատավարու-

թյան իրավունք» առարկայի շրջանակներում ներկայացրեց «Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները քրեական դատավարությունում օգտագործելու իրավական հիմքերը» թեման, որի ընթացքում վերլուծվեցին «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը:

Դասախոսության ընթացքում օգտագործվեցին դիդակտիկ նյութեր, իսկ դասի ավարտին Հ. Քոչարյանը պատասխանեց վերապատրաստվող ծառայողների բոլոր հարցերին:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎՐՈՊԱՅԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԴԵՏ



2019 թ. հունիսի 26-ին Նորվեգիայի՝ Երեխաների զարգացման միջազգային ծրագրի ներկայացուցիչ, կովկասյան տարածաշրջանային նախկին տնօրեն Մերթե Բվերնրոեդը և Ժնևի «Ոչ բռնություն» հիմնադրամի ներկայացուցիչներ Աննա Չամբարձումյանը հյուրընկալվել էին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում:

Տեղի ունեցավ հանդիպում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ Տ. Եսայանի հետ, որին մասնակցում էին կրթահամալիրի ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ Գ. Գրիգորյանը, ուսումնամեթոդական և զարգացման վարչության

պետ, ոստիկանության գնդապետ Գ. Գևորյանը և միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Գ. Դավթյանը:

Հանդիպման ընթացքում Մ. Բվերնրոեդը և Ա. Չամբարձումյանը ներկայացրին երկու կրթական ծրագիր՝ անչափահասների շրջանում տարբեր տեսակի բռնությունների և դրանցից բխող արատավոր երևույթների կանխման վերաբերյալ:

Այնուհետև ծավալված քննարկման ընթացքում կողմերը շոշափեցին ծրագրերի իրականացման առանձնահատկությունները և երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

ԽՈՍՏՈՒՄՆԱԼԻՑ ՄԵՎՆԱՐԿ



Հայրենի բնօրրանի՝ Արագածոտնի մարզի Հնաբերդ գյուղի միջնակարգ գերազանցությամբ ավարտելով՝ Աննա Ադամյանը, առանց դույզն-ինչ երկբայելու, 2003թ. դիմեց Սանկտ-Պետերբուրգի արտաքին տնտեսական կապերի, տնտեսագիտական և իրավունքի ինստիտուտի իրավաբանական ֆակուլտետը: Արժանապատիվ հայուհին առաջին իսկ կիսամյակից բուհում ճանաչվեց որպես աշխատասեր, խելացի և կարգապահ ուսանողուհի: 2008թ. Աննան գերազանցությամբ ավարտեց և մասնագիտական գիտելիքներով հագեցած՝ վերադարձավ հայրենիք, սակայն ուսումնատենչ օրիորդը չբավարարվեց ստացածով և 2012թ. ընդունվեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջը, որն ավարտեց 2014թ. և ստանալով ոստիկանության լեյտենանտի կոչում՝ ծառայության նշանակվեց Արագածոտնի մարզային վարչության Արագածի բաժնում որպես համայնքային ոստիկան:

Աննա Ադամյանը մարդկային այն տեսակն է, որ ձգտում է առավելագույնին, հետևաբար, հավակնոտ համայնքային տեսուչը 2015թ. դիմեց ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիա և դարձավ ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիայի պետաիրավական առարկաների ամբիոնի ասպիրանտ:

2016թ. ապրիլին հաստատվեց առե-

նախոսական թեզի թեման՝ «Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրաիրավական հիմքերը իրավակարգի պահպանման ոլորտում»: Առեմախոսական աշխատանքին զուգահեռ՝ նա երեք տարի առկա ստացել է մանկավարժական կրթություն՝ ձեռք բերելով հետազոտող-դասախոսի մասնագիտացում և մշակութաբանության մասնագետի որակավորում (այդ մասնագիտություններով դիպլոմավորվել է):

2018թ. հոկտեմբերի 23-ին, ավարտելով ուսումը, Աննան Մոսկվայից վերադարձավ հայրենիք, և հարազատ կրթօջախը գրկաբաց ընդունեց իր երբեմնի սանին. նա նշանակվեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնում ուսումնական ասիստենտի պաշտոնում:

2019թ. հունիսի 6-ին հաջողությամբ պաշտպանելով ատենախոսական թեզը՝ ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիայի ատենախոսական խորհրդի կողմից Աննա Ադամյանն ստացել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական ողջ անձնակազմը՝ Կրթահամալիրի պետ, գեներալ-մայոր Մ. Բաբայանի գլխավորությամբ, շնորհավորում է նորընծա գիտնականին և ցանկանում բեղուն և արգասավոր ճանապարհ, նորանոր հաջողություններ ունվաճումներ նոր ոստիկանի կրթության և դաստիարակության բարձր, պատասխանատու և պատվաբեր գործում:

Ռ. Մուսայեյան
ոստիկանության գնդապետ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ամեն բան, որ ունի սկիզբ, ունի նաև ավարտ: Ոստիկանության կրթահամալիրում ավարտվեց ևս մեկ ուսումնական տարի, և այս հունիսը ևս նշանակալից հուզառատ ու սպասումներով լի մթնոլորտով: Հունիսի 17-ից մինչև հունիսի 4-ը կրթահամալիրում մեկնարկվեցին պետական ատեստավորման քննությունները, և 121 շրջանավարտի վիճակված էր հաղթահարելու քրեական իրավունք, քրեական դատավարություն, վարչական իրավունք առարկաներից պետական քննությունների շեմը:

Անհերքելի էր, որ շրջանավարտները պետական քննություններին ամենայն պատասխանատվությամբ էին մոտեցել.

զանց» ու «լավ» գնահատականները, որոնք թերևս լավագույն գրավական են Կրթահամալիրի ընձեռած հիմնավոր գիտելիքների: Ինչ խոսք, եղան նաև ծախողումներ:

Կրթահամալիրի մատուցած հիմնավոր գիտելիքներն ապագայի տեսլականում իրավամբ պիտի այցեքարտ դառնան ոլորտում պահանջված ու մրցունակ մասնագետներ լինելու համար: Մի փաստ աներկբա է, որ Կրթահամալիրի շրջանավարտները, որոնք արդեն իսկ դիպլոմավորված մասնագետներ են, ի զորու են պաշտպանելու հասարակության յուրաքանչյուր անդամի իրավունքներն ու ազատությունները, վեր հանելու արդարությունը,



չէ՞ որ դա ևս մեկ հնարավորություն էր մատուցելու այն ամենը, ինչը ձեռք էին բերել ուսումնառության ժամանակահատվածում:

Քննական հանձնաժողովի անդամների աշխատանքն էլ դյուրին չէր. արդար, անաչառ, անկողմնակալ բայց միևնույն ժամանակ բարեհոգի ու ներողամիտ մոտեցմամբ նրանք խանդավառվեցին յուրաքանչյուր փայլուն պատասխանով, ուղղորդեցին ճիշտ կողմորոշվել քննական տոմսի հարցերի շուրջ:

Ուրախությամբ պետք է փաստել, որ ինը շրջանավարտ ոստիկանության Կրթահամալիրն ավարտեց «կարմիր դիպլոմով»: Քննական արդյունքներն ամփոփելիս գերակշռեցին «գերա-

բարձրացնելու իրավագիտակցությունը: Նրանք իրենց հետ տանելու են գիտելիքների մի ամբողջ կարողություն, որի շնորհիվ անշեղ ծառայելու են արդարությանն ու օրինականությանը:

Մշտապես լինելով երկընտրանքի սահմանագծին՝ Կրթահամալիրը մեկընդմիշտ ուղղորդում է իր շրջանավարտներին անբակտելիորեն համադրել թե՛ իրավունքը, թե՛ բարոյականությունը՝ անջրպետ չդնելով դրանց միջև: Բարի երթ ու ծառայություն ենք մաղթում մեր բոլոր շրջանավարտներին իրենց մասնագիտական բազմախոյզնոտ ուղին հարթելիս:

Հիմնավոր գիտելիքով դեպի արժանապատիվ ծառայություն...

ԱՄՓՈՓՈՋ ՆԻՍ



2019 թվականի հունիսի 17-ին տեղի ունեցավ ուսանողական խորհրդի 2018-2019 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ամփոփիչ նիստը: Նիստն անցկացվեց ուսանողական խորհրդի նախագահի, հանձնաժողովների պատասխանատուների և ուսանողական խորհրդում կրթահամալիրի պետի ներկայացուցիչ, ոստիկանության կապիտան Դավիթ Օհանյանի մասնակցությամբ:

Բացման խոսքով հանդես եկավ ուսանողական խորհրդի նախագահ Սերգեյ Բադալյանը: Այնուհետև հանձնաժողովների պատասխանատուները ներկայացրին կիսամյակի ընթացքում իրենց կատարած աշխատանքները, որից հետո Դ. Օհանյանն ամփոփեց ուսումնական կիսամյակը: Նիստի ընթացքում քննարկվեց նաև 2019 թվականի սեպտեմբերին ուսանողական խորհրդի անդամների համալրման հարցը:

ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱԾՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

Հունիսի 26-ը թմրանյութերի օգտագործման և ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջազգային օրն է (International Day Against Drug Abuse and Illicit Trafficking): Այն ընդունվել է 1987թ. դեկտեմբերի 7-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից (42/112 բանաձևով) «Թմրամիջոցների չարաշահման և ապօրինի շրջանառության դեմ միջազգային խորհրդատվական միջնորդություն»:

Թմրամիջոցները քրոնիկ հիվանդություն է, որն առաջանում է օրգանիզմի թմրանյութերի ընտելանալու պատճառով և դրսևորվում է մարմնական, նյարդային և հոգեկան բազմաթիվ խանգարումներով: Այս երևույթի դեմ պայքարը համաշխարհային խնդիրներից է: Թմրամիջոցները դիվային ախտի, մեծ չարիքի և մեղքի հետևանք է, որը շատ հնուց է տարածված մարդկության մեջ, բայց վերջին ժամանակներում այս հոգեկործան մոլուցքը համաճարակի պես մեծ արագությամբ տարածվում է աշխարհով մեկ: Հարկ է մի փոքր պատմական անդրադարձ կատարել: 16-րդ դարում սովորական ծխախոտն սկսեց տարածվել նախ Փարիզում, ապա՝ ամբողջ Հյուսիսայինում, իսկ հետո սկսվեց ծխախոտի հաղթարշավը Եվրոպայում ու ամբողջ աշխարհում: Սկզբնական շրջանում ծխամոլությունը հետապնդվում էր և խիստ պատժվում, իսկ Անգլիայում ծխողներին խայտառակում և մահապատժի էին ենթարկում, սակայն ժեժը, մահապատիժը և այլ միջոցներն անգործ էրան այդ հոգեկործան կրքի դեմ, որի արագ տարածումը ողջ աշխարհում նման էր համաճարակի: Կարծես մարդկայինը գերազանցող մի դիվային ուժ մարդկանց ստրկել էր դարձնում այդ վնասակար սովորությանը, որին շատերը ցմահ կապված մնացին և այդպես էլ չկարողացան ազատվել: Հայաստանում, 2008 թվականից սկսած, քրեական օրենսգրքում թմրամիջոցների գործածումն ապաքրեականացվել է, և թմրամիջոց օգտագործողն այժմ դիտարկվում է ոչ թե հանցագործ, այլ հիվանդ: Միջազգային հանրության գլխավոր նպատակը թմրամիջոցներից զերծ հասարակություն ստեղծելն է և մտահոգված է թմրամիջոցների, հոգեմետ նյութերի ապօրինի արտադրության, պահանջարկի, շրջանառության ծավալներով և աճի միտումներով, որոնք լուրջ վտանգ են ներկայացնում մարդկանց առողջության, բարեկեցության համար, բացասական ազդեցություն են գործում հասարակության տնտեսական, մշակութային և քաղաքական հիմքերի վրա: Աշխարհի բազում շրջաններում, որպես ապօրինի թմրամիջոցների և հոգեմետ նյութերի սպառող, օգտագործվում են երեխաները, որոնք շահագործվում են ապօրինի արտադրության և շրջանառության համար, ինչը սարսափելի վտանգ է ներկայացնում: Թմրամիջոցներն խնդիրը Հայաստանում և այժմեական է, թմրամիջոցների թիվը գնալով աճ է գրանցում, նրանց հիմնական տարիքը 29-49 է: Թմրանյութերի ապօրինի շրջանառությունն սպառնալիք է պետության կայունության, անվտանգության համար, այն միջազգային և ազգային հանցավոր գործունեություն է, որի կանխարգելումն անհայտ և առաջնահերթ ուշադրություն է պահանջում յուրաքանչյուր պետությունից: Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեմեդիկացի) նյութերի ու դրանց արեկուրոսների ապօրինի շրջանառությունը կանխելու գործում իրենց դերն ու նշանակությունն ունեն օպերատիվ-կանխարգելիչ համալիր միջոցառումները, որոնք Հանրապետության իրավապահ մարմինների կողմից պարբերաբար կազմակերպվում և իրականացվում են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Մենք և՛ որ-

պես իրավապահ մարմնի ներկայացուցիչներ, մեր ներդրումն ունենք այդ գործում, և ոստիկանի մասնագիտական բարդ աշխատանքում անխուսափելի է թմրամոլ-ոստիկան բախումը:

Թմրամոլության վնասի և հետևանքների մասին բնակչության իրազեկումը, խոցելի խմբերի հետ տարվող աշխատանքների ակտիվացումը նախատեսում է հետևյալը՝ բնակչությանն իրազեկելու երկարաժամկետ ծրագրերի մշակում, թմրամոլության հասցրած վնասի վերաբերյալ հատուկ հաղորդումների պատրաստում, թեմատիկ ֆիլմերի և տեղեկատվական այլ նյութերի ցուցադրում, որոնք հոգեբանական ազդեցություն կթողնեն մարդկանց վրա, գործազուրկ անձանց համար զբաղվածության կարգավորման և աջակցության պետական ծրագրերի մշակում և իրականացում, թմրամոլության տարածվածության և շրջանառության վերաբերյալ հետազոտությունների պարբերաբար իրականացում:

Երեխաները մեր ապագան են, և ամենից առաջ պետք է նրանց հեռու պահել այս արատավոր երևույթից, որի իրագործման համար անհրաժեշտ է անջատել հոգեբանական և ֆիզիկական շրջանում թմրամոլության կանխարգելման ժամանակակից և գիտականորեն հիմնավորված մոտեցումների մշակում, արտատունական զբաղվածության և հանցատի կազմակերպման ծրագրերի մշակում, որոնք հնարավորություն կտան վերահսկելի դարձնել նրանց առօրյան, հանրակրթական դպրոցների, միջնակարգ-մասնագիտական և ուսումնական այլ հաստատությունների ուսումնական ծրագրերում ընդգրկել թմրամոլության հետևանքների իրազեկմանն ու դրա կանխարգելմանն առնչվող դասաժամեր, բարձրացնել համապատասխան առարկաներ դասավանդող անձանց իրազեկության մակարդակը, ապահովել հասարակական կազմակերպությունների ակտիվ ներգրավումը թմրամոլության կանխարգելմանն ուղղված նախաձեռնություններում:

Թմրամիջոցներ գործածող անձանց վաղ հայտնաբերումը հնարավորություն է տալիս նրանց անմիջապես ուղեզրել համապատասխան բուժաստատություններ: Ցանկալի դրական արդյունքի համար անհրաժեշտ է ներկայացնել բուժաստատությունների աշխատանքը լինի խորհրդատվության և աջակցության համալիր ամբողջություն, թմրամոլների շրջանում փոխօգնության, խնամքի, աջակցության և կանխարգելման ծրագրեր իրականացվեն, ներկուղիական բուժաստատությունների հիվանդանոցային պայմանները բարելավված և համապատասխան բուժաբարձրումներով համալրված լինեն, ներկուղիային ուղորտի մասնագետներ պատրաստող հաստատությունների գիտական և կրթական մակարդակի բարձրացումը համաձուլել լինի ժամանակի հրամայականին, բուժանձնակազմը, հոգեբանները և սոցիալական ուղորտի աշխատողները պարբերաբար վերապատրաստում ստանան, իսկ ներկուղիական հիվանդների բուժման ստանդարտները մշտապես վերանայվեն: Թմրանյութերի օգտագործման և ապօրինի շրջանառության դեմ պայքարը պետք է կատարել ոչ միայն օրենքի շրջանակներում, այլ նաև հավատի և մեծ հույսի շնորհիվ: Թմրամոլիկ կարելի է բուժել, եթե ինքն է ցանկանում և իր մեջ ուժ է գտնում դարձի գալու: Առողջ հասարակություն ունենալու համար պետք է սկսենք անհատներից, ուստի յուրաքանչյուր թմրամոլի բուժումն օգտակար է հանրության համար:

Լիանա Խրշոյան
Ժառանգության բաժնի կրտսեր տեսուչ, ոստիկանության ավագ սերժանտ

ՊԱՐՏԵԻ ԶԳԱՅՈՒՄՈՎ

«Ձեր որդին Ռոբերտ Սաքանյանը, որ գորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության սույն թվականի հունվարի 18-ին ՀՀ ՊՆ N գործառնա, արժանապատվորեն կատարում է իր հայրենանվեր առաքելությունը, որի համար գործառնասի հրամանատարությունը շնորհակալություն է հայտնում Ձեզ՝ հարգելի ծնողներ՝ Ռոբերտին հայրենիքի պաշտպանի ոգով դաստիարակելու համար: Հիրավի, կարող եք հպարտանալ, որ մեծացրել ու դաստիարակել եք նախնիների սիրանքով ու պատգամներով տոգորված զավակ, որ ցանկացած պահի պատրաստ է անձնվիրաբար պաշտպանել հայրենիքը ցանկացած ոտնձգություններից»: Ընթերցում ենք գործառնասի հրամանատար, գնդապետ Ռ. Շահգելդյանի նամակը և ցնծություն ենք ապրում. տակավին պատանի Ռոբերտը կարճ ժամանակահատվածում կարողացել է ինքնադրսևորվել և հարգանք վայելել թե՛ սպաների և թե՛ ծառայակից ընկերների շրջանում:

Դեռ փոքրուց Ռոբերտը երազանք ուներ. դառնալ օրինապահ, պաշտպանել օրենքն ու օրինականությունը: Ավարտելով Ստեփանավանի Հովհաննես Թումանյանի անվան ավագ դպրոցը՝ եկավ ՀՀ ոստիկանության կրթահամալիր, որտեղ ավագ քույրը՝ Հասմիկն էր գերազանց առաջադիմությամբ սովորում: Դեռևս իրավագիտության ֆակուլտետի վճարովի ուսուցման առաջին կուրսի սովորող՝ ծանուցագիր ստացավ և զենց, զենց համալրելու հայրենիքի պաշտպանների շարքերն ու չափստաց, որ ուսումը կիսատ թողել: Կորագրվի և կշարունակի ուսումը իր սիրած բուհում, որտեղ նրան սպասում են բարի, հոգատար դասախոսները և սրտացավ ընկերները, որոնք



վայրկյան անզամ չեն կասկածում, որ Ռոբերտն անձնվիրաբար, պարտքի և պատասխանատվության բարձր զգացումով կծառայի իր ժողովրդին, անտրտունը կտանի զինվորական ծառայության բոլոր դժվարությունները և մի գեղեցիկ օր, հնայիչ ժայիտը երեսին, կվերադառնա, կվերադառնա՝ շարունակելու ուսումն իր սիրած բուհում:

Թող արշալույսները Հայոց աշխարհում միշտ խաղաղ բացվեն, իսկ Աստված գորավիզ լինի հայ զինվորին ու հատկապես թեզ՝ սիրելի Ռոբերտ: Բարի՛ ծառայություն:

Ռ. Մուսայելյան
ոստիկանության գնդապետ

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

«Պատրաստություն» և «պատրաստակամություն» եզրույթների բուն էությունն հասկանալու համար ստուգաբանենք: Հայերենում «պատրաստություն» եզրույթը նշանակում է որևէ բանի համար կատարվող աշխատանքների, միջոցառումների ամբողջություն: «Պատրաստություն» հասկացությունն օգտագործվում է տարբեր գիտություններում և բնագավառներում՝ մաթեմատիկական, տեխնիկական, իրավաբանական, երաժշտական, ռազմական, ֆիզիկական, մարզական և այլն: Պատրաստության այս բոլոր տարատեսակները միավորվում են «մասնագիտական պատրաստություն» հասկացության մեջ, որն ունի իր գնահատման աստիճանները:

«Պատրաստությունը» պատրաստ լինելն է, պատրաստ վիճակը, որևէ բանի համար կատարվող նախապատրաստական աշխատանքների միջոցառումների ամբողջությունը, իսկ «պատրաստակամությունը» որևէ բանի համար անհրաժեշտ պատրաստության, գիտելիքների, ունակությունների մակարդակն է, աստիճանը:

«Ֆիզիկական պատրաստությունը» ֆիզիկական դաստիարակության մասնագիտական պրոցես է՝ նպատակաուղղված լուծելու որևէ գործնական խնդիր: Գործնական աշխատանքում մենք տարբերում ենք սպորտով չպարասպորտ մարդկանց ֆիզիկական պատրաստություն, մարզիկների ֆիզիկական պատրաստություն և կրճերտ մասնագիտական ֆիզիկական պատրաստություն:

«Ֆիզիկական պատրաստակամությունը» ֆիզիկական պատրաստության արդյունքում ձեռք բերված մարդու վիճակն է և արտահայտվում է ձևավորված ունակություններով, հնարավորություններով, աշխատունակության բարձր մակարդակով:

Այս կամ այն գործունեության համար ունեցած առավելագույն ֆիզիկական պատրաստությունն անվանվում է «Ֆիզիկական պատրաստակամություն»: Արդի պայմաններում ՀՀ ոստիկանության համակարգում ֆիզիկական պատրաստակամությունը ծառայողների մասնագիտական պատրաստակամության բաղադրիչ մասն է, օպերատիվ-ծառայողական խնդիրների լուծման կարևորագույն գործոնը, հետևապես մասնագիտական գործունեությունը պահանջում է ծառայողներից ոչ միայն գիտելիքների իմացություն, այլև բարձր ֆիզիկական պատրաստվածություն:

Ֆիզիկական պատրաստակամությունը գործընթաց է, որն ուղղված է ֆիզիկական հատկությունների և շարժողական որակների զարգացմանը:

Ոստիկանության ծառայողի կողմից ֆիզիկական ուժի (ծեռնամարտի հնարքներ) գործադրման իրավական հիմքերը սահմանվում են «ՀՀ ոստիկանության մասին», «Ոստիկանության գործերի մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև նորմատիվ իրա-

վական այլ ակտերով: Համաձայն սահմանված կարգի՝ իրավախախտումները կանխելու կամ խափանելու, իրավախախտներին բռնելու և ոստիկանության պահանջներին չենթարկվելու, անհնազանդություն ցուցաբերելու կամ դիմադրության դեպքում, նաև ինքնապաշտպանության նպատակով ոստիկանության ծառայողն իրավունք ունի իրավախախտների նկատմամբ գործադրել ֆիզիկական ուժ (այդ թվում՝ ձեռնամարտի հնարքներ), եթե այլ կերպ հնարավոր չէ իր վրա դրված խնդիրների իրականացումն ապահովել:

Ձեռնամարտի հնարքների առանձնահատկությունն այն է, որ դրանք իրականացվում են ցանկացած իրադրությունում, հանկարծակի, և հնարքի ընտրությունը կախված է կոնկրետ իրավիճակից: Ձեռնամարտի հնարքներն ու գործողություններն այն բացառիկ միջոցներից են, որոնք կիրառվում են հասարակական կարգն ապահովելու, քաղաքացիների կամ ոստիկանության ծառայողների անձնական անվտանգությանն սպառնացող ապօրինի գործողությունները կանխելու և խափանելու համար:

Ոստիկանության աշխատակիցների համար ֆիզիկական պատրաստակամությունն ինքնուրույն բաժին է, ծառայողամարտական, պատրաստակամության և կարևորագույն մասնիկ՝ արհեստավարժության բարձրացման:

Ֆիզիկական պատրաստակամության նպատակը ոստիկանության աշխատակիցների ֆիզիկական և հոգեբանական որակների ձևավորումն է՝ անթերի, հաջող կատարել օպերատիվ-ծառայողական և մարտական կարգն ապահովելու, քաղաքացիական համապատասխան, կիրառել ֆիզիկական ուժ, մարտական ըմբռնարտի հնարքներով և հատուկ միջոցներով խափանել զանազան հակաօրինական դրսևորումներ:

Ոստիկանության աշխատակիցների ֆիզիկական պատրաստակամության հիմնական միջոցներից են ֆիզիկական վարժությունները, որոնք կատարվում են հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները, պահպանելով հիգիենայի պահանջները և անվտանգության կանոնները:

Ֆիզիկական պատրաստակամության ձևերը: Աշխատակիցների ֆիզիկական պատրաստակամությունն իրականացվում է ոստիկանության ծառայության ամբողջ ընթացքի ժամանակ՝ կիրառելով սահմանված և ոչ սահմանված զանազան ձևեր: Սահմանված ձևերն են՝

- 1) Ուսումնական պարապմունքներ, որտեղ յուրացվում է ուսուցման նյութը և իրականացվում է ֆիզիկական պատրաստակամությունը:
- 2) Մարզաուսուցողական պարապմունքներ, որտեղ ուսուցման նյութի յուրաց-

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

3 ◀ ման հետ միաժամանակ լուծվում են կատարելագործման խնդիրներ:

3) Մարզական պարապմունքներ, որտեղ ամրապնդվում և կատարելագործվում է ուսուցման նյութը:

Ոչ սահմանված ձևերն են

1) Անհատական կամ խմբակային լրացուցիչ պարապմունքներ այն (աշխատակիցների) պարապողների համար, որոնք չեն կարողանում կատարել ֆիզիկական պատրաստականության նորմատիվները՝ ըստ տարիքային խմբերի, կամ թերի են տիրապետում մարտական (սամբոյի) ըմբշամարտի հմարքներին:

2) Չեզոք մարտ վարելու գործնական խորհուրդներ:

1) Անկախ հակառակորդի քանակից, ձեռնամարտի բռնվելով՝ հարկավոր է արագ գնահատել իրավիճակը և որոշել հետագա գործողությունների պլանը:

2) Երբեք պետք չէ թերագնահատել հակառակորդին, պետք է միշտ ընդունել նրան որպես վտանգավոր հակառակորդ:

3) Հաղթել հակառակորդին հնարավոր է,

քանի որ ցանկացած և նույնիսկ ամենաուժեղ հակառակորդն ունի խոցելի տեղեր:

4) Պետք չէ ժամանակից շուտ անցնել պաշտպանության, քանի որ դա թույլ կտա հակառակորդին ժամանակին կողմնորոշվել և նոր հակառակորդին սկսել:

5) Արագ հարթման կարելի է հասնել հակառակորդի նյարդային կենտրոնների խոցման հետևանքով: Որոշ դեպքերում հարթման հասնելու համար մեծ դեր կարող է խաղալ բարձրաձայն բռնվելը:

6) Ոչ մի հնար չի կարելի իրականացնել մոտավորապես կամ կես ուժով, քանզի ձեռնամարտի արդյունքը հակառակորդին չեզոքացնելն է:

7) Ուսումնառության ժամանակ մի՛ ձգտեք կիրառել միանգամից բոլոր հմարքները:

8) Չեզոքացնելով հակառակորդին՝ մի՛ կորցրեք զգոնությունը և միշտ պատրաստ եղեք հնարավոր նոր հարձակման:

9) Մարտի ընթացքում պահպանե՛ք սառնասիրտ դատողությունը:

Աշոտ Գրիգորյան
նստիկանության գնդապետ

ՇՆՈՐԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, ԵՐԱԶԱՆՔՆԵՐԻՆ ԴԱՐԲՆՈՑ



Տ այսօր մեր պետության հզորացման ու ազգային իղծերի իրականացման գործում ապավինում են նաև ոստիկանությանը: Իրավապահների գիտելիքները, մասնագիտական հմտություններն ու վարպետությունը, ունակությունն ու կենսավորձը, ինչպես նաև արդարամտությունն ու անկաշառությունը, խիստ անհրաժեշտ են նոր մարտահրավերներին դիմակայելու, երկրում կայունություն ու օրինականություն ապահովելու համար:

Երբեմն լսում ենք՝ ես ուզում եմ դառնալ ոստիկան, բայց դա այն մասնագիտությունն է, որ ոչ թե դառնում, այլ այդպիսին ծնվում են, որովհետև դա մարդու խառնվածք է, էություն, բովանդակություն և հատկապես՝ հոգեբանություն:

Սակայն չեն ժխտի, որ ամեն ինչ սկսում է երազանքից, որն էլ հետո դառնում է

նպատակ, իսկ նպատակը՝ բաղձալի իրականություն: Նպատակն այն ցանկալի արդյունքն է, որ մարդը պատկերացնում է, պլանավորում և պարտավորվում հասնել ցանկալի վերջնակետի: Ինչ խոսք, բարոյ և դժվար նպատակներին հասնելը կենտրոնացում, աշխատասիրություն և մեծ ջանքեր է պահանջում:

Պարտքս հայրենիքիս տալուց հետո՝ 2016 թվականին, երազանքներս իրականացնելու ակնկալիքով ընդունվեցի ՀՀ ոստիկանության կրթահամալիր: Ուսումնառության ընթացքում բարոյական պարտքս համարեցի արժանապատիվ սովորելը, քանի որ հասկանում էի, որ առանց հիմնավոր գիտելիքների չեն կարող ծառայել իմ ազգին, իմ ժողովրդին: Այդ գործում ինձ օգնեցին ու աջակցեցին նվիրյալ, գործին գերազանց գիտակ, մասնագիտական բարձր գիտելիքներով օժտված իմ դասախոսները, որոնք չորս երկար տարիներ ամենացորդ նվիրումով կրթեցին ու դաստիարակեցին մեզ՝ ապագա օրինապահներին, որպեսզի ուր էլ գնանք, որտեղ էլ աշխատենք, բարձր պահենք հայ իրավապահի պատիվն ու արժանապատվությունը: Իմ սիրելի՛ դասախոսներ, շնորհակալություն՝ Ձեր նվիրումի, Ձեր հոգատարության ու գիտելիքների համար: Խոստանում եմ բարձր պահել՝ Կրթահամալիրի ու Ձեր պատիվը՝ միշտ հավատարիմ մնալով Ձեր խորհուրդներին ու նկրտումներին, երբեք չէրկնջելով դժվարություններից ու դարձ մարտահրավերներից:

Հայրս եմ, այո, և երիցս երջանիկ, որ շուտով կստանամ լեյտենանտի կոչում և զենքերալ դառնալու ակնկալիքով կհամալրեմ ՀՀ ոստիկանության կուռ շարքերը:

Հայկ խաչատրյան
իրավագիտության ֆակուլտետի
4-րդ կուրսի սովորող

ՎԱՐՂԱՎԱՌ



Այս տարի հուլիսի 28-ին Հայ առաքելական եկեղեցին նշում է Հիսուս Քրիստոսի Պայծառակերպությունը՝ Վարդավառը: Եկեղեցական տոնացույցի համաձայն՝ տոնը նշվում է զատիկից 98 օր հետո: Այն 35 օրերի շարժողականություն ունի և կարող է հանդիպել հունիսի 28-ից մինչև օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում:

Քրիստոսի Պայծառակերպության տոնը Հայ առաքելական եկեղեցու հինգ տաղավար տոներից երրորդն է և Պետրոս, Հակոբոս, Հովհաննես առաքյալների առջև Քրիստոսի այլակերպետության հիշատակն է, որը, ըստ ավանդության, տեղի է ունեցել Թաբոր լեռան վրա, երբ Նա առաքյալների հետ բարձրանում է Թաբոր լեռը՝ աղոթելու: Աղոթքի պահին Հիսուսը նրանց առաջ պայծառակերպվում է. «Դեմքը փայլեց, ինչպես արեգակը, և Նրա զգեստները դարձան սպիտակ, ինչպես լույսը: Եվ ահա նրանք երևացին Մովսեսն ու Եղիան, որ խոսում էին նրանց հետ: Պետրոսը պատասխան տվեց և ասաց Հիսուսին. «Տեր, լավ է, որ մենք այստեղ ենք, եթե կամենաս՝ երեք տաղավարներ շինենք, մեկը՝ քեզ համար, մեկը՝ Մովսեսի, մեկը՝ Եղիայի»:

Եվ մինչև նա խոսում էր, ահա մի լուսավոր ամպ նրանց վրա հովանի եղավ: Ամպից մի ձայն եկավ ու ասաց. «Դա՛ է իմ սիրելի որդին, որին հավանեցի, դրան լսեք»:

Երբ աշակերտներն այս լսեցին, երեսի վրա ընկան և աստիկ վախեցան: Եվ Հիսուս մոտենալով՝ դիպավ նրանց ու ասաց. «Ուտքի՛ ելեք և մի՛ վախեցեք: Նրանք այդքան բարձրացրին և Հիսուսից բացի ոչ ոքի չտեսան»:

Քրիստոսի Պայծառակերպության մասին վկայում են Մատթեոս (17:2), Մարկոս (9:2) և Դուկաս (9:29) ավետարանիչները:

Հայ եկեղեցին Հիսուս Քրիստոսի Պայծառակերպությունը կոչում է նաև Այլակերպության տոն կամ Վարդավառ: Ս. Գրիգոր Տաթևացին տոնի Վարդավառ անունը բացատրում է Հիսուսին վարդի հետ համեմատելով: Ինչպես վարդը մինչև բացվելը թաքնված է իր պատյանի մեջ և բացվելով՝ երևում է բոլորին, այնպես էլ Հիսուս մինչև այլակերպությունն էր մեջ կրում էր աստվածային էությունը և պայծառակերպվելով

հայտնեց Իր Աստվածությունը:

Ըստ Վահան վարդապետ Տեր-Մինայանի՝ Վարդավառը 4-5 հազար տարվա տոն է: Այդ օրը հայերը որտեղ էլ որ բնակվեն գույնզգույն ծաղիկներով, կարմիր վարդերով ծաղկեպսակներ են հյուսում, զարդարում իրենց տաճարները, դրա համար էլ այս տոնը կոչվում է Վարդավառ: Տոնի ժամանակ ժողովրդական սովորույթներից է միմյանց վրա ջուր ցողել ու աղավաղներ բաց թողնելը, որոնք խորհրդանշում են ջրիեղեղը, Նոյի ընտանիքի փրկությունը ջրիեղեղից, Նոյի աղավազում: Հայտնի է, որ բնության տարրերից առանձնապես պաշտամունքի են արժանացել ջուրն ու կրակը, որոնք կենսական նշանակություն ունենին մարդկանց համար: Դրա համար էլ և՛ կրակը, և՛ ջուրը Վարդավառի ժամանակ հավասարազոր նշանակություն ունենին: Ըստ ավանդության՝ երբ Նոյ նահապետը դուրս եկավ տապանից, առաջին ամիսը կոչեց Նավասարդ, որ նշանակում է «նորոգված աշխարհ»:

Ջրիեղեղից ազատվելու հիշատակն անմոռաց դարձնելու նպատակով նա առաջարկեց իր տղաներին ջուր լցնել իր վրա:

Վարդավառի առավելագույն բոլոր եկեղեցիներում անցկացվում է պատարագ՝ նվիրված Քրիստոսի Պայծառակերպությանը, ջրի օծում և մրգերի օրհնություն (խնձորը տոնի խորհրդանշաններից է):

Ինչպես մինչև Տիրամոր Վերափոխման տոնին կատարվող խաղողօրհնեցի արարողությունը խաղող չէին ուտում, այնպես էլ ժողովրդական տարածված սովորությամբ՝ մինչև Վարդավառը խնձոր չէին ուտում: Այս սովորությունն անվանում էին «խնձորի պաս»: Ըստ ժողովրդական ավանդության՝ Վարդավառի գիշերը բոլոր սրբերի գերեզմաններին լույս է իջնում:

Պայծառակերպության տոնին հաջորդող երկուշաբթի մեռելոց է: Այդ օրը նույնպես եկեղեցիներում մատուցվում է Սուրբ պատարագ, որի ավարտին կատարվում է հոգեհանգստյան կարգ: Եկեղեցական արարողությունից հետո մարդիկ այցելում են հանգուցյալների շիրիմներին:

Աննա Սարգսյան
նստիկանության ավագ լեյտենանտ

ՍՏԵՂՃԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐՈՆԸ

ԱՆԿԵՂՉ ԵՐԻՐ

Գեթ այս անգամ անկեղծ եղիր դու քեզ հետ, Ասա՛ ինչու՞՝ երազների մահացան, Այսօր գոնե դու ճանաչիր ինքդ քեզ, Ասա՛՝ ինչպե՛ս խնդրությունդ հուշ դարձավ:

Վերջին անգամ դու ինձ հիշիր մեկ վայրկյան, Առաջվա պես՝ խաղաղությամբ ու սիրով, Մի՛ մոռացիր, այլ միշտ հիշիր, որ այդ ժամ ես եղել եմ շատ հուսաբեկ ու խռով:

Այսօր փորձիր դու ճանաչել ինքդ քեզ, Լսիր անկեղծ խորհուրդները քո հոգու, Հիշիր՝ ինչն էր մի ժամանակ հոսյա տալիս՝ երազներում մեզ կապելով իրար հետ:

Փորձիր ասել, թե ինչը քեզ այս անգամ Ընկեր դարձրեց անկարելից տանջանքին. Որքա՞ն պիտի շարունակեն դառնանալ, Փնտրել այդտեղ չեղած բաժինն իմ մեղքի:

Գեթ այս անգամ անկեղծ եղիր դու քեզ հետ, Թե ինձ խաբես, դա դեռ ոչինչ, կներե՛մ, Բայց ի՞նչ անեմ, ինչպե՛ս վարվեմ ես այն ժամ, Թե որոշես նորից խաբել ինքդ քեզ:

Հեսաբիրի է իմանալ

ՄԱՅԱՐԻԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Գուրգեն Մահարին ինքն իր մասին գրել է. «Քո կյանքի ճանապարհը ուղիղ չեղավ, ինչպես լարախաղացի ճանապարհը, ոչ էլ միշտ փշոտ, տատակոտ, ինչպես մարզարենների ճանապարհը: Հաճախ դու մեղանջեցիր քո դեմ, քո սրտի, հոգու, խղճի դեմ, բայց հավատա՛, ո՛վ դու, որ նայում ես հայելու միջից տխուր աչքերով, քո ժողովուրդը քեզ կների, որովհետև դու մարդ ես եղել, և այն ամենը, ինչ մարդկային է, խորք չի եղել քեզ համար... Մեծ ու փոքր ընկերներ ունեցար դու, մեծ ու փոքր սերեր, մեծ ու մանր կրթեր, կորցրեցիր ու գտար, հաճախ, երբ կորցրիր, ուրախացար, երբ գտար, տխրեցիր, բայց դու անկեղծ եղար, քո մոլորությունների մեջ անգամ անկեղծ... Ո՛վ դու, որ



Այդ ժամանակ... Այդ ժամանակ չեմ հավատա Ո՛չ ինձ, ո՛չ էլ քեզ, Ու աշխարհում կավելանան երկու հոգի՝ Անմխիթար ու իրկեզ:

Գրետա Ալեքսանյան
ակադեմիայի իրավագիտության
ֆակուլտետի
4-րդ կուրսի սովորող